ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 28 դեկտեմբերի 2020թ.

2020 թվականի դեկտեմբերի 8-ից մինչև 28-ը ներառյալ Բյուրեղավանի համայնքապետարանը կազմակերպել էր Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին»որոշումների նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումներ: Հանրային քննարկումների մասին հրավերը հրապարակվել է Բյուրեղավանի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ (տես՝ http://byureghavan-kotayk.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=84d808c3-56c7-4997-9bc0-212e9f7e47d3 հղումով) ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև փակցվել է Բյուրեղավանի համայնքապետարանում, ՀՈԱԿ-ներում, Նուռնուս և Զրաբեր բնակավայրերում առկա ցուցատախտակներին:

Օրակարգում՝

1. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին»,
2. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին»

Դեկտեմբերի 08-ից 28-ը ներառյալ էլեկտրոնային եղանակով կայացած քննարկումների ընթացքում ներկայացված նախագծերի վերաբերյալ շահագրգիռ անձանց կողմից առաջարկություններ և կարծիքներ չեղան:

Որոշեցին՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին» որոշումների նախագծերին հավանություն տալ և գնահատել դրական:

Քննարկումների պատասխանատու և վարող՝

Բյուրեղավան համայնքի ղեկավար՝ Հ. Բալասյան

Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավար՝ Մ. Գևորգյան

Ձրաբեր բնակավայրի վարչական ղեկավար՝ Մ. Հարությունյան

Արձանագրող՝ Բյուրեղավանի համայնքապետարանի

աշխատակազմի քարտուղար՝ Լ. Ավուշյան